

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

23 նոյեմբերի 2006 թվականի N 46

17. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ, ԴՐԱ
ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2006 թ. նոյեմբերի 28
Երևան

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ, ԴՐԱ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

2006 թվականի մարտի 20-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան՝ հավաստելով իր պատրաստակամությունը ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության ուղղությամբ ազգային մշակութային ծրագրերի մշակմանը և միջազգային մշակութային կառույցների հետ համագործակցությամբ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված միջոցառումներ են նախատեսված նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 30-ի N 1922-Ն որոշման միջոցառումների 14.8-րդ կետով: Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության մասին հայեցակարգը ներառում է այդ որոշման միջոցառումները, ինչպես նաև նախատեսում է ոչ նյութական մշակութային ժառանգության շարունակականության և կենսունակության ապահովման միջոցառումներ:

«Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգի» (այսուհետ՝ հայեցակարգ) միջոցով ՀՀ կառավարությունը հավաստում է ոչ նյութական մշակութային ժառանգության կենսունակության կարևորությունը, ընդունում է ոչ նյութական մշակութային ժառանգության ավանդական ձևերի պահպանման ու դրանց զարգացման օրինաչափություններին, դրանց կենսունակությանը նպաստելու անհրաժեշտությունը՝ պաշտպանելով ժողովուրդների ինքնության վերարտադրության իրավունքը և այդ իրավունքի ավանդական ու արդիական ձևերը:

Ոլորտին առնչվող հիմնախնդիրների համակարգմամբ, կանոնակարգմամբ և անհրաժեշտ միջոցառումների իրագործմամբ հնարավորություն կստեղծվի ձևավորել ազգային մշակութային ոչ նյութական ձևերի հանդեպ հարգանքի մթնոլորտ, դրանց օրինաչափ զարգացում, կձևավորվի համապատասխան օրենսդրական դաշտ, ստեղծելու պայմաններ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության համար և լիարժեքորեն անդամակցել միջազգային կոնվենցիայով նախատեսված գործընթացներին:

Հայեցակարգում առաջադրված խնդիրներն ու նպատակները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրագործվող մշակութային քաղաքականությանը, միջազգային կոնվենցիայի դրույթներին և Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին:

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

19-րդ դարի սկզբին Եվրոպայում սկիզբ առած նորագույն քաղաքակրթությունը, ի թիվս այլ հարցերի, մեծ տեղ հատկացրեց մի կողմից՝ հնագույն «մեռած» քաղաքակրթությունների վերծանմանն ու ուսումնասիրմանը, մյուս կողմից՝ հաստատեց ճշգրիտ գիտությունների, մասնագիտական կրթության և մշակութային նյութական ժառանգության

պահպանման գերակայությունը: Սակայն անտեսվեց նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության միջև եղած սերտ փոխկապակցվածությունը: Անցած մեկուկես դարը չնպաստեց ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությանն ու պահպանությանը: Ոչ նյութական մշակութային արժեքների ավանդական և ժողովուրդների ինքնության պահպանությանը ծառայող արժեքների շատ ձևերի շարունակականությունը ընթացավ ինքնակարգավորման ուղիով, և քաղաքական, գաղափարախոսական կամ այլ նկատառումներով ներկրված կամ վերածնված ոչ նյութական մշակութային արժեքների էլիտարության ներդրումը զգալի չափով ազդեց էթնիկ մշակույթների ոչ նյութական արժեքների ստորակարգմանը, դրանց «զավառայնացմանը» և դրանց կարևորության և ինքնատիպության հանդեպ հարգանքի ու հպարտության զգացողության նվազմանը: Պահպանական միջոցների սակավությունը, հանրության և համապատասխան գիտամշակութային կազմակերպությունների անուշադրությունն ու հոգածության աստիճանական նվազումը, ոչ նյութական մշակութային արժեքների կենսունակությանն ու զարգացման պաշտպանությանն ուղղված ծրագրերի սակավությունը, իսկ երբեմն էլ՝ ուղղակի բացակայությունը հանգեցրին այն բանին, որ ոչ նյութական մշակութային արժեքները մի դեպքում համալրվեցին գաղափարախոսությանը ծառայող արժեքներով, այլ դեպքում՝ ձևափոխվեցին, ընդ որում ձևափոխությունն ընթացավ երկու ուղիով. ժողովրդական մշակույթի զարգացման օրինաչափություններով և քաղաքական գաղափարախոսությունը հաստատող նորմերով: Արդյունքում ոչ նյութական մշակութային արժեքների զգալի մասի զարգացումն ընթացավ պասիվ և «զավառայնության» կնիքով, ինչով վերջիններս մեծ կորուստ կրեցին զարգացման օրինաչափությունների ընթացքում և հայտնվեցին երկրորդական արժեքների ցանկում:

Այսօր համաշխարհային հանրությունը, մշակութային ժառանգության պահպանմանն աջակցող տեղական և միջազգային կառույցներն անհանգստացած են և ձեռնարկում են որոշակի քայլեր կանխելու մշակույթի բազմազանության շտեմարան հանդիսացող ոչ նյութական մշակութային ժառանգության՝ ազգերի ուրույն բանավոր, հոգևոր և հասարակական մշակույթների անհետացումը: Ներդրվում են միջոցներ դիմակայելու մշակույթի համաշխարհայնացման /գլոբալիզացիա/ և անհարկի համահարթման մարտահրավերներին: Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության և պահպանության գործում թերացումները կարող են հանգեցնել ազգերի միջև մշակութային անհանդուրժողականության ձևավորմանն ու ծավալմանը: Ոչ նյութական մշակութային ժառանգությունը անգնահատելի դեր ու նշանակություն ունի մարդկանց, նրանց որոշակի խմբերի, ժողովուրդների փոխըմբռնման, մշակույթների մերձեցման և անհրաժեշտ մշակութային փոխազդեցությունների համար:

Հայաստանի Հանրապետությունում ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության և դրանց կենսունակության պաշտպանության վերաբերյալ որոշ քայլեր արվել են:

Հայաստանի Հանրապետությունում ոչ նյութական մշակութային ժառանգության հետազոտման և պահպանման խնդիրներով մինչ օրս զբաղվել են Գիտությունների ազգային ակադեմիան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայությամբ գործող «Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողովրդական ստեղծագործության կաբինետը և հայ երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնը: Երևանի պետական համալսարանում գործում են բանահյուսության, ազգագրության ամբիոններ: Ոչ նյութական մշակութային ժառանգության բնագիր նյութերը պահվում են Պետական արխիվում և հանրապետության մի շարք թանգարաններում: Սակայն մեծ մասը ցրված է տարբեր կազմակերպությունների պահոցներում, վերոհիշյալ գիտական ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների արխիվներում, համայնքների ենթակայությամբ գործող թանգարաններում, մարդկանց առանձին խմբերի և անհատ բանահավաքների անձնական հավաքածուներում:

Անցած տասնամյակների ընթացքում հանրապետությունում կուտակվել է բանահավաքչական աշխատանքի զգալի փորձ, սակայն վերջին տարիների սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացման պատճառով ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը դարձել է հիմնախնդիր: Հավաքված նյութերի վերծանման, պահպանման և մշակման համար չկան տարրական տեխնիկական, տեղեկատվական միջոցներ: Բանահավաքչական, պահպանական աշխատանքներն ու ուսումնասիրությունները կազմակերպվում են տեխնիկական և նյութական ոչ բավարար պայմաններում: Նյութերի՝ ժամանակակից կրիչների փոխադրումը, թվայնացումը պահանջում են ֆինանսական ներդրումներ: Ոլորտի գիտնականների, հետազոտողների, աշխատողների և ոչ նյութական մշակութային ժառանգության անմիջական կրողների սոցիալական վիճակի բարելավման կարիք կա: Հետևություն. վտանգված է ազգային մշակույթի ժառանգության և ինքնատիպության ոլորտը:

Այսպիսով՝ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը դարձել է մշակութային պետական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը, և անհրաժեշտություն է առաջացել պետական լիազորված մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման, պետական լիազորված մարմնի ենթակայությամբ գործող «ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով համակարգել վերոհիշյալ ոլորտը՝ պետական աջակցությամբ, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներդրումով, պահպանական անհրաժեշտ միջոցառումներով:

3. Ոչ նյութական մշակութային ժառանգությունը

«Ոչ նյութական մշակութային ժառանգությունը» - դա հանրությունների, խմբերի, և որոշ դեպքերում, առանձին անձանց կողմից որպես իրենց մշակութային ժառանգություն ճանաչված ծեսերը, պատկերացումներն ու արտահայտությունները, գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև դրանց հետ կապված գործիքները, առարկաները, արվեստի գործերն և մշակութային տարածքներն են:

Ոչ նյութական մշակութային ժառանգությունը ընդգրկում է անցյալում ստեղծված, պահպանվող, կիրառվող և բանավոր փոխանցվող ավանդական մշակութային արժեքների ամբողջությունը, որը հիմնականում դրսևորվում է հետևյալ բնագավառներում.

Բանահյուսական ժառանգություն

ա. *բանավոր արտահայտման ձևերը*, ներառյալ լեզուն և բարբառները,

բ. *վիպական բանարվեստն*՝ իր ժանրերով՝ դյուցազնավեպ, առասպել, հեքիաթ, ավանդություն, զրույց, առակ, հանելուկ, առած և ասացվածք, անեծք և օրհնանք, երգում, աղոթք, նաև՝ ողջույնի, հրաժեշտի, մաղթանքի բանաձևեր և այլն,

գ. *քնարական բանարվեստն*՝ իր ժանրերով՝ դյուցազներգություն, վիպերգ, պատմական, ռազմի երգ, հայրեն, աշխատանքային-ծիսական երգ, օրորոցային ու մանկախաղաց երգ, սիրերգ, պարերգ և այլն,

Կատարողական արվեստներ

ա. *ժողովրդական պարավեստն*՝ իր տեսակներով՝ աշխատանքային, ծիսական պար, շուրջպար, զուգապար, մենապար և այլն,

բ. *գործիքային երաժշտությունն*՝ իր տեսակներով՝ ծիսական, հովվական, ռազմի և այլն,

գ. *դրամատիկական բանարվեստն*՝ իր տեսակներով՝ թատերայնացված խաղ, հանդիսություն, դիմակահանդես, լարախաղացություն, ստվերների թատրոն և այլն:

Ազգագրական ժառանգություն

ա. տոմարային տարեպտույտ տոներն ու ծեսերը,

- բ. մարդու կյանքի կարևոր շրջափուլերը նշանավորող տոներն ու ծեսերը /ծնունդ, ամուսնություն, մահ/,
- գ. ազգային հավատալիքներն ու սովորույթները,
- դ. ընտանեկան նիստուկացը, հասարակական վարք ու բարքը, բարոյական նորմերը, ազգային հոգեբանությունը և այլն,
- ե. Տնտեսվարման հմտություններ, այդ թվում նաև երկրագործական և անասնապահական հմտությունները,
- զ. բնության և տիեզերքին վերաբերող գիտելիքներ, հմտություններ և սովորույթներ, ժողովրդական աստղագիտությունն ու տոմարը,
- է. ազգային խոհանոցն ու սննդատեսակների գործածությունը:

Ավանդական արհեստների հետ կապված փոխանցվող հմտություններ և գիտելիքներ

- ա. քարագործության, մետաղագործության, դարբնության, արծաթագործության, ոսկերչության, փայտագործության, կավագործության, կարպետագործության, գորգագործության, մանածագործության, ասեղնագործության հմտությունները,
- բ. հագուկապ /տարազ/ կրելը և զարդարվեստի գործածությունը,
- գ. բնակարանի կահավորման առանձնահատկությունները, կահկարասու նախընտրությունը,
- դ. երաժշտական գործիքներ պատրաստելու և դրանք կիրառելու հմտությունները:

«Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանություն» նշանակում է ոչ նյութական մշակութային ժառանգության նույնականացումը, դրանց զարգացման խթանումը, բարելավումը, հաջորդ սերունդներին փոխանցումը՝ պաշտոնական և ոչ պաշտոնական կրթության և դրանց վերաբերյալ ճանաչողության ապահովման միջոցով, այդ ժառանգության տարբեր ուղղությունների վերակենդանացումը, փաստաթղթերով ձևակերպումը, թվայնացումը, հետազոտությունը, թանգարանային կամ արխիվային պահպանությունը :

Ոչ նյութական մշակույթը առանձնահատուկ է նաև իր զանազան արտահայտչամիջոցներով: Այն նաև մտածողության առանձին և ինքնուրույն մի համակարգ է, որն էականորեն տարբերվում է գրավոր և հեղինակային, /պատմագրություն, իմաստասիրություն, եկեղեցական ծես, հոգևոր երաժշտություն, քերթողական արվեստ, աշխարհիկ գրականություն, երաժշտություն, գեղանկարչություն, թատրոն, խորեոգրաֆիա և այլն/ համակարգերից:

Ոչ նյութական մշակույթն ունի աշխարհի ընկալման, ճանաչման և իմաստավորման իր սեփական միջոցները, կյանքը պատկերավորելու և վերարտադրելու համապատասխան *«գործիքներն»* ու եղանակները:

Ոչ նյութական մշակույթին հատուկ են «ժողովրդագրական սեփական տարածքը» և անմիջական կրողները: Ժողովրդական ավանդույթները ստեղծում են մշակույթի ընդհանրական դաշտ, բավարարում հանրության, մարդկանց որոշակի խմբերի մտավոր և հոգևոր պահանջները, ապահովում անհատի և հասարակության տեղն ու դերը ազգի հոգևոր զարգացման տարբեր փուլերում: Ոչ նյութական մշակույթի բանավոր գոյաձևը մշակույթի փոխանցման յուրօրինակ ոլորտ է, դպրոց, համընդհանուր ուսուցման միջոց, որն ապահովում է իմացողից չիմացողին, ավագից կրտսերին տրվող գիտելիքների ամբողջության փոխանցումը և պահպանությունը:

4. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության նպատակներն են՝
1. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և պաշտպանության միջոցով ազգային դիմագծի և ինքնության պահպանումը,

2. ստեղծված ազգային և համամարդկային ոչ նյութական մշակութային ժառանգության հանդեպ հասարակության հոգածության և հարգանքի ձևավորումը,
3. ոչ նյութական մշակութային արժեքների զարգացման միջավայրի ապահովում,
4. ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների փոխանցումը սերունդներին,
5. Հայաստանի Հանրապետության ինտեգրումը համապատասխան միջազգային կառույցներին,
6. համագործակցության, միջազգային փորձի փոխանակման և տարածման խթանումը,
7. մշակութային կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում համապատասխան ծրագրերի ներդրումը:

5. ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության խնդիրներն են՝

1. պետական միասնական քաղաքականության առաջնային ուղղությունների նախանշումն ու սահմանումը,
2. ոչ նյութական մշակութային պահպանվող և պաշտպանվող արժեքների ցանկի կազմումը, դրանց կենսունակության ապահովման միջոցառումների ծրագրավորումը, ներդրումը, պահպանության և պաշտպանության իրագործումը,
3. պետական արխիվներում, գիտական և մշակութային կազմակերպություններում պահվող գրառված, տեսագրված նյութերի թվայնացումը,
4. Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում առկա ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակների և դրանց կրողների մասին տեղեկատվական շտեմարանների ստեղծումը, տեղեկատուների հրատարակումը,
5. ավանդական ոչ նյութական մշակույթի ուսուցումը ֆորմալ /պաշտոնական-ծրագրային/ և ոչ ֆորմալ /ոչ պաշտոնական՝ գիտելիքների անհատական փոխանցմամբ/ եղանակով,
6. ոչ նյութական մշակույթի վերաբերյալ հրատարակված ժողովածուներին, հավաքածուներին, ուսումնասիրություններին նվիրված մատենագիտության ստեղծումը,
7. ոչ նյութական մշակութային ժառանգության և դրանց կրողների միջազգային փոխանակումների համար պայմանների ստեղծումը,
8. ոչ նյութական մշակութային ժառանգությանը վերաբերող անտիպ նյութերի և գիտական ուսումնասիրությունների հրատարակումը,
9. ոչ նյութական մշակութային ժառանգության և դրանց կրողներին վերաբերող կայքերի ստեղծումը,
10. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության գործում համագործակցության ապահովումը,
11. Հայաստանի Հանրապետության մարզերում, արտերկրում բանահյուսական, ազգագրական, արհեստագործական նյութերի հետազոտ հավաքման համար պայմանների ստեղծումը, կազմակերպական աշխատանքների անընդհատության ապահովումը,
12. ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցադրման համար անհրաժեշտ տարածքների և հիշարժան վայրերի պահպանությունը և դրանց ներառումը զբոսաշրջության ոլորտ,
13. ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և տարածման համար կադրերի ներգրավումը, կադրերի պատրաստումը, վերապատրաստումը, վերաորակավորումը,
14. ոչ նյութական մշակութային ժառանգության կրողների մասնակցությամբ ծիսակարգերի և հանդիսությունների կազմակերպումը և անցկացումը,

15. ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման նպատակով համայնքների մշակույթի տների վերականգնումը,
16. Հայաստանի Հանրապետության մարզերում ոչ նյութական մշակութային ժառանգությամբ զբաղվող մշակութային հասարակական կազմակերպությունների, ազգային փոքրամասնությունների միությունների, համապատասխան մշակութային կազմակերպությունների գործունեության պետական աջակցությունը և խթանումը,
17. օրենքով չարգելված այլ միջոցներով աջակցություն և օգնություն, դրամաշնորհային ծրագրերի ներդրումը:

6. ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ոլորտի իրավահարաբերությունների կանոնակարգում՝ «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքի ընդունում, օրենքից բխող ենթաօրենսդրական համապատասխան ակտերի մշակում, որոնցով նախատեսվում է կարգավորել ոլորտի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համապատասխան կազմակերպությունների և ոչ նյութական մշակութային ժառանգության անմիջական կրողների գործունեության իրավական հիմքերը:
2. ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում և կիրառություն,
3. ՀՀ մարզերում և համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության նպատակով՝ մշակույթի տների կառուցում, վերակառուցում, նյութատեխնիկական բազայի ստեղծում, համալրում և արդիականացում,
4. ուսուցման և վերապատրաստման միջոցով գիտելիքների ու հմտությունների փոխանցում,
5. միջազգային մշակութային կապերի սերտացում, ընդլայնում և փոխանակումների կազմակերպում:

7. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետությունում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ոլորտում պետական մշակութային քաղաքականությունն իրագործվում է «Մշակութային քաղաքականության հիմունքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մշակույթի պահպանման, տարածման և զարգացման պետական ծրագրերի /տարեկան, եռամյա և հեռանկարային/ միջոցով, «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին» սույն հայեցակարգով, միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով,
2. ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման պետական քաղաքականության սկզբունքն է.
 - ազգային ոչ նյութական մշակութային ժառանգությունը սահմանել որպես մտավոր և մշակութային գործունեության կարևորագույն ոլորտ և պետության կողմից պաշտպանվող ու պահպանվող ազգային անձեռնմխելի հարստություն:
3. ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման քաղաքականությունն ուղղված է ապահովելու՝
 - ոչ նյութական մշակութային ժառանգության (արժեքների ամբողջության) պաշտպանությունը, պահպանությունը Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում,
 - ոչ նյութական մշակութային ժառանգությանը հաղորդակցվելու մատչելիության ապահովումը,
 - ոչ նյութական մշակութային արժեքների (ավանդույթների կիրառմամբ ստեղծված ժողովրդական մշակութային արժեքներ) պահպանությունը և նորովի վերարտադրման գործընթացում ընդհանուր հասարակական մասնակցության ապահովումը,

- ոչ նյութական մշակութային ավանդական ժառանգությունը երիտասարդ սերնդին փոխանցելու նոր եղանակների և միջոցների որոնումը, ներդրումը և կիրառումը,
- ոչ նյութական մշակութային ժառանգությունը անխաթար պահելու գործընթացը:

8. ՈՉ ՆՅՈՒՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ոլորտի ֆինանսական աղբյուրներն են՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն,
2. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները,
3. ձեռնարկատիրական և վճարովի ծառայություններից ստացվող եկամուտները,
4. միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող դրամաշնորհները,
5. օրենսդրորեն չարգելված ֆինանսական այլ աղբյուրները:

9. ՈՉ ՆՅՈՒՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՈՒՄՆԵՐԸ

1. Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանությանը վերաբերող իրավական ակտերի մշակում,
2. ոլորտում լիազորված պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կազմում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը համակարգող կառույցի ստեղծում,
3. Պետական արարողակարգերում ներդնել հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային արժեքների՝ իրավիճակին համապատասխան տարրեր,
4. ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության և պաշտպանության նպատակով՝ «ժողովրդական ստեղծագործությունների և արհեստագործության» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության ընդլայնում՝ մասնաճյուղերի հիմնում Հայաստանի Հանրապետության մարզերում,
5. ոչ նյութական մշակութային արժեքների ցուցակագրում և համապատասխան նյութերի նույնականացում,
6. ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությանը և պահպանությանը նվիրված ծրագրերի մշակում, մշակութային միջոցառումների կազմակերպում և իրագործում /հանդիպումներ, համերգներ, ծիսակարգեր և հանդիսություններ, տոներ/,
7. ոչ նյութական մշակույթին վերաբերող կրթական ծրագրերի մշակում, ներդրում և իրագործում,
8. Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում հասարակական կազմակերպություններին, ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և համապատասխան գործունեության ծավալման գործում, կազմակերպչական ու մեթոդական աջակցության ցուցաբերում,
9. ոչ նյութական մշակութային ժառանգության նյութերի ուսումնասիրման, հրատարակման և հանրահռչակման գործառնություններ իրագործող գիտական և մշակութային կազմակերպություններին, արշավախմբերին պետական աջակցության տրամադրում,
10. Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ոչ նյութական մշակութային ժառանգության կրողների փոխանակումների ապահովում և աջակցում,
11. ոչ նյութական մշակութային ժառանգությանը վերաբերող առանձին կայքերի ստեղծում և տեղակայում համացանցում,

12. ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ բազմաբնույթ նյութերի հրատարակում և տարածում,
13. ժողովրդական արհեստագործական հմտություններին վերաբերող ուսումնական, խորհրդատվական, օժանդակ ձեռնարկների կազմում և հրատարակում,
14. ոչ նյութական մշակութային արժեքների պահպանությանը վերաբերող մասնագիտությունների /բանահավաքություն, ազգագրագետներ/ և մասնագետների թվաքանակի ավելացում բարձրագույն ուսումնական հաստատություններում,
15. համգործակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի և միջազգային մշակութային համապատասխան կազմակերպությունների հետ: